ՓՐԿԵՆՔ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Տիգրան Հայրապետյան

ՓՐԿԵՆՔ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Ռեգիոնալ վերլուծություններ

ՀԱՏՈՐ 3

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 32
ԳՄԴ 66.0
Հ 300

Հայրապետյան Տիգրան
Հ 300 Փրկենք հայրենիքը: Ռեգիոնալ վերլուծություններ /
Տ. Հայրապետյան.- Եր.: Newmag, 2023.
ՀԱՏՈՐ 3.- 392 էջ:

Տիգրան Հայրապետյանի վերլուծությունների երրորդ հատորում առաջին երկու հատորներում հնչեցրած նրա հարցերի պատաս-խաններն են: Առաջին երկու հատորներում հեղինակը ճշգրտորեն, գրեթե մարգարեական կանխատեսմամբ ախտորոշում է Հայաստանի ու տարա-ծաշրջանի առջև այսօր ծառացած խնդիրները: Նա քննարկում է Արևմուտքի ու Արևելքի հավակնությունները և նրանց ծրագրերում Հայաստանի դերը: Այս հատորում հավաքված են հեղինակի այն հոդվածները, որոնցում նա պատաս-խաններ է փնտրում ու տալիս է «Երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար ի՞նչ պետք է անել» հարցի պատասխանը:

Տիգրան Հայրապետյանն այս հատորում ներկայացրել է Արցախի խնդրի կարգավորման 5 տարբերակ, վերլուծել բոլոր դետալները, իրար կողքի դրել փաստերը, համաշխարհային պատմության օրինակներն ու պատմական փորձը և դուրս բերել Հայաստանի համար լավագույն լուծումը: Գրքում հեղինակը 44-օրյա պատերազմից ավելի քան 25 տարի առաջ կանխատեսել է, թե որ ուղղությամբ է թշնամին հարձակվելու Հայաստանի վրա, և ինչ պետք է անել դիմակայելու համար:

ՀՏԴ 32
ԳՄԴ 66.0

Գիրքը հրատարակվել է
Աղվան Վարդանյանի աջակցությամբ:

ISBN 978-9939-884-86-8
Տիգրան Հայրապետյան «Փրկե՞նք հայրենիքը» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին և Տիգրան Հայրապետյանի մտավոր սեփականության իրավատեր Նազենի Ղարիբյանին:

Բովանդակություն

Մաս I Պետականության կառուցումը համազգային խնդիր է 7
Նախաբան 9
Գլուխ 1 Միջինարևելյան ընդհանուր տուն 11
Գլուխ 2 Տասը երկար ու ձիգ տարիներ 72

Մաս II Ինչպես չհայտնվել մուրճի և սալի արանքում 141
Նախաբան 143
Գլուխ 1 Դուրս գալ փակուղուց 145
Գլուխ 2 Հակակշռված քաղաքականություն 171
Գլուխ 3 «Հայկական հարցի» միջազգայնացման հետևանքները 191

Մաս III Արցախյան հակամարտության կարգավորման շուրջ 227
Նախաբան 229
Գլուխ 1 Ծաղիկներ Սադաթի գերեզմանին 231
Գլուխ 2 Նոր մոտեցումներ ԼՂՀ խնդրի վերաբերյալ 281
Գլուխ 3 Մտորումներ Արցախյան հարցի շուրջ 319

Մաս I

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐ Է

Նախաբան

Մի քանի օրում տեղի ունեցավ այն, ինչ ամենահամարձակ կանխատեսումներով սպասվում էր առաջիկա 3-5 տարիների ընթացքում: Շատերն էին խոսում ԽՍՀՄ-ում սպասվող արմատական փոփոխությունների մասին, բայց իրադարձությունների նման զարգացումը շփոթեցրեց բոլորին: Անշուշտ, հազարամյա ընդհատումից հետո դժվար է համակերպվել այն մտքի հետ, որ պետք է ինքներս տնօրինենք մեր ճակատագիրը: Նման ավանդույթներ մեր քաղաքական միտքը չունի: Մեր քայլերը միշտ թելադրված են եղել քաղաքական հանգամանքներով կամ ծրագրված մեծերից մեկի կողմից: Բայց այժմ ավանդական պատվիրատուն խոր ճգնաժամ է ապրում, իսկ Արևմուտքը մեզ հարմար ոչինչ չի նախապատրաստել: Հայ ժողովուրդը մենակ է մնացել իր անսահման հավակնությունների ու աննշան հնարավորությունների հետ: Իրադրությունը պահանջում է առաջ քաշել նոր ազգային և համամարդկային գաղափարներ, և որքան էլ այս երկուսի համադրումը ժլխտում է մեր ավանդական մտածողությունը, դա միակ, իրականությամբ թելադրված հնարավորությունն է:

Միջին Արևելքում խաղաղության գործընթացի իրականացումն այսօր հրամայական անհրաժեշտություն է: Պետք է հասկանալ, որ այս գործընթացն արաբա-իսրայելյան խնդրի լուծումից վերաճելու է Միջին Արևելքում նոր աշխարհակարգի հաստատման ընթացքի, որի շրջանակներում էլ մշակվելու են տարածաշրջանային բոլոր խնդիրների լուծման

տարբերակները, այդ թվում՝ մեզ առնչվող խնդիրները: Գործընթացի կազմակերպման համար պետք է մի երկիր, որի տարածքում անհրաժեշտ կառույցների ստեղծումն ընդունելի կլինի Միջին Արևելքի բոլոր երկրների համար, և մի ժողովուրդ, որ կդառնա այդ ընթացքի գաղափարական կրողը: Հայաստանն ունի բոլոր պայմաններն այս գործընթացի հոգևոր ու տարածքային առանցքը դառնալու համար: Սա այն ճանապարհն է, որի վրա ոտք դնելով ձեռք կբերենք և՛ քաղաքական ապահովվածություն, և՛ տնտեսական ու հոգևոր բուռն առաջընթացի խթաններ, և՛ մեր ազգային խնդիրները լուծելու հազվագյուտ հնարավորություն: Սա նաև մեծ քաղաքականությանը սեփական սցենարով մասնակցելու տարբերակն է, որի բեմադրությունն ամբողջովին կախված է մեր աշխատունակությունից, արագությունից և մտավոր պաշարից:

Գլուխ 1

Միջինարևելյան ընդհանուր տուն

Ինչո՞ւ տապալվեց ազգային շարժման քաղաքականությունը

Հարյուրամյակներ շարունակ հայ ժողովրդին ներարկել էին այն գաղափարը, թե առանց հյուսիսային հարևանի աջակցության նա գոյատևել չի կարող: Վերջինս բազմիցս չարաշահել էր «ավագ եղբոր» իր իրավունքները, և վաղ թե ուշ վերջ պիտի տրվեր նրա «հոգածությանը»: Սակայն դրա համար անհրաժեշտ էր ձերբազատվել թուրքական սպառնալիքի արմատավորված բարդույթից, ապացուցել Հայաստանի ժողովրդին, սփյուռքին և այլոց, որ պանթուրքիզմը, իսլամական շրջապատը և այլ «բնական» գործոնները հաղթահարելի են: Սա հեղափոխություն էր, ռեֆորմիզմ քաղաքականության, ազգային մտածողության, հոգեբանության մեջ: Սակայն այսօր այն տեղատվություն է ապրում:

Նախ անհրաժեշտ է ընդունել, որ ազգային շարժման սկզբից մինչև իշխանության գլուխ անցնելու պահը հայկական քաղաքական միտքը նույնքան սնանկ էր, որքան այսօր կամ 100 տարի առաջ: Միակ քիչ թե շատ ձևավորված միտքն ազատ, անկախ և միացյալ Հայաստանի գաղափարն էր, որի հիմքում, սակայն, հայկական պահանջատիրության քարացած

դոգման էր՝ զուրկ գաղափարախոսական հիմքից, նոր պայմաններում գործունեության ծրագրից, կտրված իրականությունից և, որ առավել անընդունելի էր, հաշվարկված «մեծ եղբոր» ողորմածության վրա: ԽՍՀՄ-ից Հայաստանի անկախացման գաղափարը ոչ մի ձևով չէր ներդաշնակում վերը նշվածի հետ, և ազգային շարժման առաջնորդները պետք է հրաժարվեին ավանդական ճանապարհից՝ բացելով նոր, մինչև այդ անհայտ, ինքնիշխան, սեփական կամքին ենթակա պետականության ստեղծման ճանապարհը: Ցավոք, առաջադիմական միտքը, որ կոչված էր փոխելու հայ ժողովրդի քաղաքական ապագան, նյութականացման ընթացքում ընդունեց այնպիսի ձևեր, որոնք հանգեցրին այսօրվա ճգնաժամային վիճակին:

Հասարակական-քաղաքական կյանքի և հատկապես ազգային խնդիրների հետ առնչվող ցանկացած ռեֆորմացիա պահանջում է իրականացվող ծրագրերի և ակնկալելի արդյունքի հստակ պատկերացում՝ հիմնված խոր և համակողմանի ուսումնասիրությունների վրա: Դրա բացակայությունը կարող է մասամբ փոխարինվել միայն ռեֆորմատոր անհատի կամ ընտրախավի առկայությամբ, որը գործունեության ընթացքում կարողանում է պատշաճ մակարդակով լուծել առաջադրվող խնդիրները: Կյանքը ցույց տվեց, որ հայկական ազգային շարժման մեջ երկուսն էլ բացակայում էին: Ռեֆորմացիան հեղափոխականությունից պետք է տարբերվեր իր հանդուրժողությամբ և չպետք է ժխտեր կամ բացառեր գոյություն ունեցող արժեքները, գաղափարները կամ հարյուրամյակներով ձևավորված իդեալները, այլ նոր իմաստ, ոգի ու բովանդակություն հաղորդեր նրանց: Մերժելով միա-

ցյալ Հայաստանի ու նրա հիմնաքարը հանդիսացող պահանջատիրության քարացած և իրատեսությունից զուրկ պատկերացումները, չէր կարելի մերժել գաղափարը, մանավանդ, եթե փոխարենը կենսունակ ոչինչ չէր առաջարկվելու: Առանձին մտավորականների և շարժման որոշ առաջնորդների շարադրած մտքերը զուրկ էին անհրաժեշտ քաղաքական հիմնավորումից, և ավելի շատ արտահայտում էին նրանց ենթադրությունները, քան ծառացած խնդիրների լուծման ճանապարհներն ու հնարավորությունները:

Հայաստանում հաղթանակած ազգային ուժերը, ի դեմս Գերագույն խորհրդի նորընտիր նախագահի, բացառիկ հնարավորություն ունեին ազգային գաղափարի շուրջ (թեկուզ ռեֆորմացված և սփյուռքի համար վիճելի) համախմբելու կուսակցական, կրոնական և այլ հատկանիշներով պառակտված սփյուռքը: Սակայն նրանք գերադասեցին բացառման ուղին՝ ամբողջովին բացառելով տասնամյակներ շարունակ սփյուռքին միս ու արյուն տված ազգային գաղափարը, բացառելով այդ գաղափարին ծառայող մի ամբողջ կուսակցություն և նրա հետ միասին տասնյակ հազարավոր հայերի: Դա չէր կարող բացասաբար չազդել իրադարձությունների հետագա զարգացման վրա, և այսօր, երբ ընդդիմության շարքում է դասվում նաև սփյուռքի մյուս ազդեցիկ կուսակցությունը, մնում է միայն հարց տալ՝ իսկ ո՞ւմ հետ և ինչպե՞ս է կառուցվում հայկական պետականությունը: Ովքեր Հայաստանում և սփյուռքում ողջունեցին ավանդական ազգային ստրկամտության վերացման հնարավորությունը շարժման առաջնորդներից ակնկալում էին բազմակողմանի, լավատեղյակ ակտիվ քաղաքականություն, որ հայ ժողովրդին

իսկապես կպոկեր հյուսիսի հետ դարերով պարտադրված «գրկախառնությունից», սակայն փոխարենը ստացան անլիարժեքության մեջ իրար գերազանցող թեզեր, որոնք, պղպջակների նման հաջորդաբար պայթելով, տենդի մեջ էին պահում հանրապետությունը՝ նետելով նրան մի ծայրահեղությունից մյուսը: Այսպես, մերժելով ազգային հարցում միակողմանի հյուսիսային ուղղվածությունը՝ ընդհանրապես անտեսեցին այդ հզոր գործոնի առկայությունը և նույնիսկ կանգնեցին զինված դիմակայության ուղու վրա: Միայն ծանր կորուստները ստիպեցին հասկանալ, որ երրորդ ուժի միակողմանի դեկլարատիվ բացառումը վերջինիս միջամտությունը կանխելու բավարար գործոն չէ: Որդեգրելով «Չկան մշտական բարեկամներ և մշտական թշնամիներ, այլ կան հավերժական շահեր» կարգախոսը՝ խեղաթյուրեցին այն անճանաչելիության աստիճան՝ վանելով հին բարեկամներին և նոր բարեկամներ այդպես էլ ձեռք չբերելով: Երկու տարի ամբողջ արտաքին քաղաքականությունը ծառայեցրին ի դեմս Թուրքիայի վստահելի գործընկերոջ ձեռք բերելու նպատակին, իրականում չկարողացան ապահովել նույնիսկ նրա չեզոքությունը: Չօգնեցին անգամ հայկական պահանջատիրությունից հրաժարվելու և ցեղասպանության խնդիրը մեղմելու հնարավորության մասին տեղին, իսկ ավելի հաճախ անտեղի հայտարարությունները Եվրոպայի ու Ամերիկայի բոլոր անկյուններում, ինչը մեկ անգամ ևս ապացուցեց, որ անսկզբունքային զիջողականությունն արմատական պահանջատիրությունից պակաս վտանգավոր չէ, իսկ գուցեև ավելի: Մամուլը բազմիցս նախազգուշացնում էր, որ արևմտյան բարեհաճությունը քաղաքական գործոն չէ, և պետք է

ծանրակշիռ լծակներ ձեռք բերել, որպեսզի «հայոց կաթողիկոսի թղթյա շերեփը»* հարյուրամյակ հետո ժառանգաբար չանցնի հայոց նախագահին:

Սակայն Հայաստանում արտաքին քաղաքականությունը «մի խումբ լուսավորյալների» մենաշնորհն է, որ տապալված թեզերը հեշտությամբ փոխարինում են նորերով (այսօր դա կոչվում է «իրատեսական քաղաքականություն»), սկզբունքների համակարգի, գաղափարների և հստակ ծրագրերի բացակայությունը բացատրում են «ժամանակակից աշխարհի զարգացման միտումներով», իսկ մասնագետների երկրագրական գիտելիքները շփոթում են քաղաքագիտության հետ: Այնուամենայնիվ, ազգային շարժման գաղափարախոսական և քաղաքական անկումը չպետք է հող ստեղծի հին դոգմաների վերակենդանացման համար: Վերադառնալ հին մտածելակերպին նշանակում է հյուսիսային ազդեցությունից ամեն գնով ազատվելու նոր բարդույթը փոխարինել ամեն գնով նրա «պաշտպանության» տակ մնալու հին բարդույթով: Սա դարձյալ մեզ տանելու է փակուղի: Ծայրահեղականությունը, որ ուղղությամբ էլ կիրառվի, ի վերջո, վնասում է ազգային շահերը: Ընդդիմությունը պետք է ուժ գտնի իր մեջ ռեֆորմացվելու, իսկ իշխանությունները պետք է ուժ գտնեն ճանաչելու իրենց սխալները:

Պատմությունն այնպես է ձևավորվել, որ Հայաստանը չունի «սովորական» երկիր դառնալու հնարավորություն, և նրա

* Հայկական պատմագիտության տված հայտնի մեկնաբանությունը «Հայկական հարցի» բարենպաստ լուծման ակնկալիքների հերթական ձախողման Բեռլինի կոնգրեսի կապակցությամբ, որ թևավոր խոսքի ուժ է ստացել հայ քաղաքական մտքի բառապաշարում: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):